ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ՍՑ-ԱՄ-2018/32

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.03.2018թ. թիվ 03/26-3/4722-18 գրությամբ «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 07.03.2018թ. թիվ 31-134 և 14.03.2018թ. թիվ 31-149 գրությունների հիման վրա, 16.03.2018թ. թիվ 03/26-3/4722-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Գալտ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.03.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի փաթեթը հանձնելիս Ընկերության կողմից թույլ է տրվել սխալ և հավելված N3-ը՝ «Հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին», հանձնվել է բաց մրցույթի հրավերի ձևաչափով, գնանշման հարցման հրավերի ձևաչափի փոխարեն: Այսպիսով «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությով պետք է «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվեր հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, և հետևաբար կամ մերժվեր ներկայացված հայտը, կամ ուղարկվեր շտկման, որը չի կատարվել: Արդյունքում՝ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությամբ «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն չէր կարող ճանաչվել թիվ 2 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից և կատարվեին հետագա գործողությունները:

Վերոհիշյալ գրությամբ Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի առնել վերը նշված հանգամանքները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/32 ընթացակարգի շրջանակներում 20.03.2018թ. ժամը 10:30-ին և 26.03.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն 07.03.2018թ. թիվ 31-134 գրությամբ հայտնել է, որ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաը՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Կարգով սահմանված ժամկետում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից (Կոմիտե) եզրակացություն չի ստացվել: Ըստ այդմ, մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվել են իրականությանը համապատասխանող, և հանձնաժողովի կողմից 01.03.2018թ. կայացած գնահատման նիստում նշված մասնակիցը ճանաչվել է ընտրված:

Անգործության ժամկետը հաշվարկվել է 02.03.2018թ.- 06.03.2018թ., որի ընթացքում կոմիտեից ստացվել է եզրակացություն առ այն, որ «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 22.02.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց պարտավորություններ, որը կազմում է 14 647 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է գնային առաջարկի 1%-ը (գնային առաջարկը կազմել է 151 320 ՀՀ դրամ): «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Կոմիտեից լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվել է 06.03.2018թ.՝ մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ս.թ. մարտի 6-ի դրությամբ, այնինչ պետք է ներկայացվեր 22.02.2018թ. դրությամբ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/32 ընթացակարգի շրջանակներում 20.03.2018թ. ժամը 10:30-ին և 26.03.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 22.02.2018թ. հայտ է ներկայացրել «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***151 320 ՀՀ դրամ:***

4. «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 23.02.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 02.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 14 647 ՀՀ դրամի չափով:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 07.03.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2018թ. թիվ 03/26-3/4722-18 գրությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 07.03.2018թ. թիվ 31-134 և 14.03.2018թ. թիվ 31-149 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար արգելափակող լոյսերի եվ լուսադիոդային լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***22.02.2018թ.*** հայտ է ներկայացրել «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***151 320 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 23.02.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում Կոմիտեի կողմից եզրակացություն չի ստացվել: Ըստ այդմ, Ընկերության ներկայացրած հայտարարությունները գնահատող հանձնաժողովի կողմից համարվել են իրականությանը համապատասխանող, և հանձնաժողովի 01.03.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացած որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 02.03.2018թ. տրամադրվել է եզրակացություն համաձայն որի՝ ***«Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 14 647 ՀՀ դրամի չափով:***

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 02.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու օրվա՝ 22.02.2018թ., դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 14 647 ՀՀ դրամ չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը: Մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող***

մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կողմից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորություն-ների առկայությունը, ***ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված այն փաստարկին, որ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերի փաթեթը հանձնելիս Ընկերության կողմից թույլ է տրվել սխալ և հավելված թիվ 3-ը՝ որակավորման

չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը, հանձնվել է բաց մրցույթի հրավերի ձևաչափով, գնանշման հարցման հրավերի ձևաչափի փոխարեն, հայտնում եմ, որ տվյալ դեպքում ուսումնասիրվում է Ընկերության վարքագիծը՝ կապված հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու հետ, որը տվյալ դեպքում հաստատվում է Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ: Իսկ ինչ վերաբերում է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 3 հավելվածում «գնանշման հարցման» բառերի փոխարեն «բաց մրցույթ» բառերը նշված լինելու հանգամանքին, ապա արձանագրում եմ, որ նշված հավելվածում բոլոր անհրաժեշտ հատվածներում ծածկագիրը և գնման ընթացակարգի ձևը Ընկերության կողմից նշվել է ճիշտ և նման պայմաններում միայն մեկ հատվածում «բաց մրցույթ» բառերը նշված լինելը չի կարող դիտարկվել որպես հայտի թիվ 3 հավելվածը այլ ձևաչափով ներկայացված լինելու հիմք, քանի որ բովանդակային առումով այն համընկնում է հրավերով սահմանված օրինակելի ձևին և պարունակում է Ընթացակարգի ճիշտ ծածկագիրը և ձևը:

Այսպիսով՝ Ընկերության կողմից վկայակոչված փաստարկը չի կարող դիտարկվել որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, գտնում եմ, որ «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ն «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.03.2018թ. թիվ 03/26-3/4722-18 գրությամբ «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00254553) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գալտ Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**